Յոթերորդ հաղորդում

Աստծու՝ Դեբորային բարձրացնելը՝ որպես Իսրայելի դատավորի և որպես Իսրայելում եղող մոր, ով կիրարկում էր կնոջ ենթարկվելը տղամարդուն, որպեսզի պահպաներ Աստծու սահմանածը և ամբողջ Իսրայելին բերեր պատշաճ կարգի Աստծու թագավորության և գլխավորության տակ

Գրվածքների ընթերցում. Դտվ 4–5

I. Դատավորաց գիրքը ցույց է տալիս, որ Իսրայելը վիրավորել էր Աստծուն՝ մերժելով Նրան՝ որպես իր Թագավորի. Աստծու աչքին մեծ արատավորություն է, մեծ չարիք, եթե մենք մերժում ենք Իրեն՝ որպես մեր Թագավորի, մեր Տիրոջ, մեր Գլխի և մեր Ամուսնու՝ Ա Թգ 8:7, 12:17, 19, Դտվ 21:25, 17:6, Ղկս 19:11-14, Երմ 11:13, Եզկ 16:24.

Ա. Մենք պետք է անընդհատ ընդունենք, փորձառաբար ապրենք ու վայելենք Քրիստոսին՝ որպես մեր Թագավորի, մեր Տիրոջ, մեր Գլխի և մեր Ամուսնու, որպեսզի Նա կարողանա լինել մեր օրհնությունը՝ մեզ սրբերի և բոլոր եկեղեցիների համար օրհնության հոսքուղի դարձնելու նպատակով՝ Մտթ 2:2, Հվի 1:49, Եբր 7:2, Եսյ 32:1-2, 33:22, Փլպ 2:9-11, Հռմ 14:6-9, Բ Կրթ 4:5, Կղս 2:19, Եփս 1:22-23, Բ Կրթ 11:2-3, Օվս 2:19-20, Թվց 6:23-27, Սղմ 128:5, 48:2:

Բ. Մտթ 1:1-ը խոսում է Քրիստոսի՝ որպես «Դավթի Որդու, Աբրահամի Որդու» մասին.

1. Քանի որ մենք ապստամբ ենք, պետք է ապաշխարենք և ընդունենք Քրիստոսին՝ որպես Դավթի Որդու, այսինքն՝ որպես մեր իշխանության, որպես մեր Տիրակալի և Թագավորի, որպեսզի Նա Աստծու թագավորությունում իշխի մեր մեջ և մեզ վրա:
2. Եթե մենք ունենանք Քրիստոսին՝ որպես Դավթի Որդու, ավելի մեծ Սողոմոնի, Նրան կունենանք նաև որպես Աբրահամի Որդու՝ իրական Իսահակի. սա նշանակում է, որ ինչքան շատ ենք Քրիստոսին ընդունում որպես մեր Թագավորի (Դավթի Որդու), այնքան շատ ենք լինում Նրա իշխելու ներքո, իսկ որքան ավելի շատ ենք Նրա իշխելու ներքո լինում, այնքան ավելի շատ ենք վայելում Նրան՝ որպես մեր օրհնության (Աբրահամի Որդու). սա պատրաստված Եռամեկ Աստծու օրհնությունն է, ով ավարտունացել է որպես համաբովանդակ Հոգին՝ խ. 1, Գղտ 3:14, 16, 29:
3. Սա մեզ կդարձնի օրհնության հոսքուղիներ՝ հանուն սրբերի առաջընթացի (կյանքում աճելու) և հավատքի ուրախության (Քրիստոսին վայելելու). մենք կանչվել ենք օրհնելու ուրիշներին, ուստի մենք՝ որպես օրհնված ժողովուրդ, միշտ պետք է օրհնենք ուրիշներին, որպեսզի օրհնություն ժառանգենք՝ Փլպ 1:25, Ա Պտ 3:9:

II. Աստված Դեբորային բարձրացրեց որպես Իսրայելի դատավորի, ով կիրարկում էր կնոջ ենթարկվելը տղամարդուն, որպեսզի պահպաներ Աստծու սահմանածը և ամբողջ Իսրայելին բերեր պատշաճ կարգի Աստծու թագավորության և գլխավորության տակ՝ Դտվ 4–5.

Ա. Իսրայելի զավակները Ավովդի մահից հետո (4:1) նորից արեցին այն, ինչ Եհովայի աչքին չար էր, ուստի Եհովան Իսրայելին մատնեց (բնգ՝ վաճառեց) Քանանի Հաբին թագավորի ձեռքը, որի զորքի զորապետը Սիսարան էր. նա ինը հարյուր երկաթե կառք ուներ և քսան տարի շարունակ Իսրայելին դաժանորեն կեղեքում էր՝ խխ. 2, 3բ:

Բ. Դատավորաց 4-րդ գլխի ժամանակ իսրայելացի տղամարդիկ ձախողել էին իրենց ղեկավարելու գործառույթը, որ Աստված էր սահմանել. սա Աստծուն ստիպեց ինչ-որ արտակարգ և արտասովոր բան անել, բարձրացնել մի կնոջ՝ Դեբորային, որպես Իսրայելի դատավորի. այդպիսի կնոջ բարձրացումը փոխեց Իսրայելի ողջ իրավիճակը՝ խխ. 4-5:

Գ. Իսրայելի զավակներն աղաղակեցին Եհովային (խ. 3ա), և Դեբորան՝ մի մարգարեուհի, բարձրացվեց որպես Իսրայելի դատավոր. նա նստում էր Դեբորայի արմավենու տակ, և Իսրայելի զավակները դատի համար բարձրանում էին նրա մոտ՝ խխ. 4-5:

Դ. Աստվածաշնչում պատշաճ կինը մատնանշում է մեկին, ով ենթարկվում է Աստծուն, մեկին, ով պահում է Աստծու սահմանածը. սա այն դիրքն է, որ Իսրայելը պետք է ընդուներ Աստծու առջև որպես իր Թագավորի, իր Տիրոջ, իր Գլխի և իր Ամուսնու, բայց Իսրայելը խախտեց Աստծու սահմանածը՝ թողնելով իր՝ որպես Աստծու կնոջ դիրքը և լքելով Նրան՝ նախընտրելով հարյուրավոր կուռքերի. սա Իսրայելին հասցրեց թշվառ վիճակի և թշվառ դրության.

1. Սամսոնն իր մոր որովայնից իր կյանքի ողջ ընթացքի համար ուխտավոր էր. ուխտավորը պետք է թույլ տար, որ իր մազերը երկարեին, ինչը նշանակում էր, որ նա պետք է շարունակ ենթարկվեր Տիրոջ գլխավորությանը, որի մեջ զորությունն է՝ Թվց 6:5, Դտվ 16:17, Ա Կրթ 11:3-6, 10, 15:
2. Բայց Դալիլան ամեն օր նրան ստիպում էր իր խոսքերով և համոզում հայտնել իր զորության գաղտնիքը, այնպես որ «նրա հոգին մինչև մահ հոգնեց» (Դտվ 16:16). Սատանայի հյուծիչ մարտավարության պատճառով Սամսոնն ընկավ Սատանայի թակարդը, Դալիլան սափրեց նրա մազերը, և նա փղշտացիների կողմից գերեվարվեց՝ կորցնելով ուխտավորի իր նվիրաբերումը, իր զորությունը, սրբացման վկայությունը և Աստծու ներկայությունը (Դնլ 7:25):
3. Նրանք, ովքեր ընդունում են այն ուրիշ և սխալ ուսմունքը, թե հավատացյալները չպետք է ենթարկվեն Աստծու նշանակած իշխանության ներկայացուցիչներին, այդ ուսմունքով կփչանան. մեր պարագայում (հատկապես ամուսնացած քույրերի՝ Եփս 5:22-24), պետք է լինի ենթարկվող հոգի, դիրք, մթնոլորտ և մտաղրություն. եթե

դուք այդպիսի մարդ եք, ձեզ և ձեր ապագայի համար մեծ օրհնություն կլինի:

Ե. Կարդալով Դեբորայի երգը Դտվ 5-ում՝ տեսնում ենք, որ նա լի էր կարողությամբ, ունակությամբ, խորաթափանցությամբ և կանխատեսմամբ, բայց այդքան գերազանց և ունակ մարդը շատ հնազանդ էր. Աստված նրան դարձրեց առաջնորդ, սակայն նա պահեց պատշաճ կարգը և Բարաքին ընդունեց որպես իր ծածկոցը՝ 4:6-9, տե՛ս Ա Կրթ 11: 3-6, 10:

Զ. Դեբորան գիտակցում էր, որ իրեն տղամարդ էր անհրաժեշտ, որպեսզի լիներ իր ծածկոցը, ինչպես Պողոսն է Ա Կրթ 11:3-ում ասում. «Յուրաքանչյուր տղամարդու գլուխը Քրիստոսն է, իսկ կնոջ գլուխը՝ տղամարդը, իսկ Քրիստոսի գլուխը՝ Աստված»:

Է. Երբ այս գերազանց, արտասովոր կինն առաջին քայլն արեց՝ կիրարկելու կնոջ ենթարկվելը տղամարդուն, ամբողջ երկրում հիանալի և պատշաճ կարգուկանոն տիրեց. բոլոր առաջնորդները քայլ արեցին, ամբողջ ժողովուրդը հետևեց, և բանակը կազմավորվեց. ամեն ոք վերադարձավ Եհովայի առաջ եղած իր պատշաճ դիրքին:

Ը. Ուստի Դեբորան իր երգում կարող էր ասել. «Որ առաջնորդներն Իսրայելում առաջնորդեցին, որ ժողովուրդն իրեն պատրաստակամորեն մատուցեց, օրհնե՛ք Եհովային.... Հետո ազնվականների մի մնացորդ իջավ. Եհովայի ժողովուրդն ինձ հետ իջավ ընդդեմ հզորների»՝ Դտվ 5:2, 13:

Թ. Եկեղեցում քույրերի առաջին և ամենամեծ գործառույթը ենթարկվող լինելն է. եթե քույրերը կարողանան սովորել այս դասը, եկեղեցին կլինի ուժեղ, հարստացված և նորացված.

1. Ենթարկվելու համար պահանջվում է կենսամատակարարում, շնորհքի վայելք, խաչի գործելը և «ես»-ի ուրացումը:
2. Ովքեր լցված են Քրիստոսով, լցված են հնազանդությամբ. Տերը, ով Իր ողջ կյանքի ընթացքում ենթարկվող էր, մեզ տվել է Իր ենթարկվելու և հնազանդության կյանքը՝ Փլպ 2:5-11, Եբր 5:7-9:
3. Այն, որ քույրն ամուսնանում է եղբոր հետ, նշանակում է, որ նա պատրաստ է իրեն զոհաբերելու և ասելու. «Ես պատրաստ եմ ենթարկվելու». եթե քույրն իր սրտում երբեք մտադրություն չի ունեցել ենթարկվելու նրան, ում հետ մտադիր է ամուսնանալ, ապա չպետք է նրա կինը լինի և չպետք է նրա հետ ամուսնանա՝ Եփս 5:22-23, Ա Պտ 3:1-6:

III. Դեբորան բարձրացվեց ոչ միայն որպես Իսրայելի դատավոր, այլև որպես Իսրայելում եղող մայր՝ Դտվ 5:7.

Ա. Երբ եկեղեցական կյանքը գործնականում հասնում է գագաթնակետին, ապա յուրաքանչյուր եկեղեցում պետք է մի քանի իրական մայրեր լինեն. Հռմ 16:13-ում Պողոսն ասում է. «Ողջունեցե՛ք Ռուֆոսին՝ Տիրոջ մեջ ընտրյալին, և նրա մորը, որ նաև իմն է».

1. Պողոս առաքյալը մոր կարիք ուներ. առանց քրոջ՝ որպես մոր, ով հոգ կտանի իրենց համար, բոլոր նրանք, ովքեր Տիրոջ ծառայության

հոգսն են կրում, տխուր կլինեն. մենք բոլորս հոգևոր մայրերի խնամքի կարիքն ունենք, որոնց խնամքը մեր իրական սնունդն է և մեր իրական պաշտպանությունը:

2. Այն, որ Պողոսը հոգևոր մայր ուներ, ցույց է տալիս, որ Հռոմում եղող եկեղեցական կյանքում սրբերը կյանքի փոխադրում էին ունեցել Քրիստոսի խաչելության և հարության միջոցով. կյանքի փոխադրում ունենալու լավագույն միջոցը Պողոսի օրինակին հետևելն է, ով որոշել էր ոչինչ չգիտենալ՝ բացի համաբովանդակ Քրիստոսից, և Նրան գիտենալ որպես խաչվածի՝ Ա Կրթ 2:2:

Բ. Հովհաննեսի Ավետարանը կյանքի գիրք է, բայց ոչ թե բնական կյանքի, այլ փոխադրված ու փոխակերպված. ի սկզբանե Հովհաննեսը Մարիամի որդին չէր, իսկ Մարիամը Հովհաննեսի մայրը չէր, բայց Քրիստոսի՝ կյանք ազատագրող մահվան, Նրա կենսատու հարության և նրանց հետ Նրա կյանքի միության շնորհիվ Նրա սիրելի աշակերտը կարող էր մեկ լինել Նրա հետ և դառնալ Նրա մոր որդին, իսկ Մարիամը՝ դառնալ Նրա սիրելի աշակերտի մայրը՝ 19:26-27:

Գ. Մեր առաջին փոխհարաբերությունը մսեղիով է, բայց երկրորդը՝ հոգով, այսինքն՝ փոխադրված կյանքում. քանի որ մենք երկրորդ ծնունդ ունենք (3:6), անկասկած, ունենք երկրորդ փոխհարաբերությունը, երկրորդ ընտանեկան փոխհարաբերությունն իրական քույրերի և իրական մայրերի հետ:

Դ. Եթե քույրերն իրական մայրեր լինելու համար վարժեն իրենց աղոթքի և հավատքի հոգին (Բ Կրթ 4:13), կգիտակցեն, թե իրենք որքան եսասեր են և թե որքան են իրենց մեջ. եթե նրանք հոգում լավ զավակներ ունենան, դա ծայրաստիճան կմերկացնի նրանց. բացի դրանից՝ քույրերը, մի քանի հոգևոր զավակների համար հոգ տանելով, կյանքում կաճեն և կհասունանան:

Ե. Եթե քույրերը սիրում են Տիրոջը և Տիրոջ վերականգնման մեջ եկեղեցական կյանքի համար լինելու հարցում լուրջ են տրամադրված, ապա պետք է իրենց ծառայող բուժքույրեր համարեն, եկեղեցու բուժքույրեր, ովքեր եկեղեցում՝ որպես իսկական հիվանդանոցում, բուժքույրական հոգատարություն են ցուցաբերում. բոլոր քույրերը պետք է ծառայող քույրեր լինեն աղոթքի ճանապարհով և սիրող մայրեր՝ սիրո ամենագերազանց ճանապարհով, որպեսզի կարիքավորներին և ավելի կրտսերներին օգնեն նրանց հոգևոր կյանքում և եկեղեցական կյանքում. սա օրհնություն ստանալու, աճելու, հոգևոր լինելու և Տիրոջն իսկապես վայելելու լավագույն ճանապարհն է՝ Հռմ 16:1-2, 13, Եսյ 66:12-13, Ա Կրթ 12:31բ, 13:4-7:

IV. Աստվածաշունչն ասում է, որ այդ ժամանակ Աստծու ժողովրդի միջավայրում «սրտում եղող մեծ որոշումներ» և «սրտի մեծ փնտրումներ» կային՝ Դտվ 5:15-16.

Ա. Մեծ վճռականություն ունենալ նշանակում է ամուր որոշում կայացնել,

իսկ մեծ փնտրում ունենալ նշանակում է Տիրոջն ապրելու ծրագիր մշակել և Տիրոջն արտահայտել Նրա արդի վերականգնման համար՝ Նրա Մարմինը կառուցելով, Նրա հարսին պատրաստելով և Նրա թագավորությունն իր դրսևորմամբ բերելով՝ Բ Կրթ 5:14-15, Հռմ 14:7-9, Հյտ 19:7-9:

Բ. Երբ Լի եղբայրը Ճապոնիայի ռազմական ոստիկանության կողմից 1943թ.-ին ճնշումների էր ենթարկվում, Տերը նրան երազ ուղարկեց, որում նա լուսաբաց տեսավ նման առավոտյան այգաբացին, և մի շատ պայծառ, շատ ուղիղ և անսահմանորեն առաջ ձգվող լայն ճանապարհ. սա Տիրոջ վերականգնման լայն ճանապարհը, ծագող արևը և անսահմանափակ ապագան է՝ հմմտ Առկ 4:18:

Գ. Մենք պետք է ձգտենք և աղոթենք, որպեսզի նմանվենք նրանց, ում Դեբորան նկարագրում է իր երգի վերջում, որն ավարտվում է փառավոր կերպով. «Նրան սիրողները իր զորությունով ծագող արևի պես լինեն»՝ Դտվ 5:31.

1. Այն, որ արևն իր զորությունով ծագում է, նշանակում է, որ այն շողում է պայծառ, շլացուցիչ և փառավոր կերպով. եթե բոլոր եկեղեցիները փորձառաբար ապրեն այս որոշումները, փնտրումները և արևի պես շողալու նպատակով բարձրանալը, նրանք հաստատապես կվայելեն Տիրոջը՝ որպես իրենց հաղթանակի:
2. Հաղթահարողները, ովքեր վերակազմավորվում են բուժող Քրիստոսով՝ որպես արդարության Արևով, արևի պես կշողան իրենց Հոր թագավորությունում՝ Մղք 4:2, Ղկս 1:78-79, Մտթ 13:43:

©2021 *LivingStreamMinistry*